

**ԸՆՏԱՆԻ ԿԵՆՌԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՂԲԵՋԱՆԵՐԵՆՈՒՄ,  
ԴՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՇԵՐՏԵՐԸ**

Լեզուն և առաջին հերթին դրա բառապաշարը ժողովուրդների պատմության կենդանի վկաներն են, որոնք արտացոլում են տվյալ լեզուն կրող ժողովրդի հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, նրանց կենցաղն ու մշակույթը: Թյուրքական լեզուների բառագիտական վերլուծությունները, ինչպես նաև պատմագրական նյութերի ուսումնասիրությունն ու հնագիտական պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ վաղ ժամանակներից քոչվոր անասնապահությունը թյուրքալեզու ժողովուրդների համար պարզապես հիմնական զբաղմունք չէր, այլ կենսակերպ և գոյատևման միջոց<sup>702</sup>: Այդ է պատճառը, որ համաթյուրքական բառաֆոնդն ունի հարուստ և զարգացած անասնապահական եզրույթաբանություն, որն այժմ էլ կազմում է այդ լեզուների ժամանակակից բառաֆոնդի մի մասը: Տեսեսական արժեք ունեցող ընտանի կենդանիների անվանումները վերաբերում են բառապաշարի ամենահին շերտերին: Առանձին լեզուների բառաֆոնդի խմբերի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի հետազայում, համադրելով բոլոր տվյալները, կատարել ավելի լայն եզրահանգումներ, վեր հանել ուսումնասիրվող բառաֆոնդի հնագույն շերտերը և գտնել դրանց փոխադարձ կապը ժամանակակից թյուրքական և ոչ թյուրքական լեզուների հետ: Ադրբեջաներենի բառապաշարն այս իմաստով նույնպես բացառություն չի կազմում: Այստեղ առկա ընտանի կենդանիների անվանումները մեծ մասամբ ընդհանուր են թյուրքական լեզուներից շատերի համար, որն էլ վկայում է այն մասին, որ դրանց մի մասն առաջացել է այն ժամանակ, երբ թյուրքական լեզուները դեռևս չէին բաժանվել<sup>703</sup>:

**Ձիերի անվանումներ**

**Alapaça** ոտքերի արանքը սպիտակ ձի: Ժողովրդական դեստաններում այսպես են անվանում նաև թյուրքական էպոսի հերոս Քյոռոզլուի ձիուն<sup>704</sup>:

**Ayqır** հովատակ, բազմացման համար առանձնացված ցեղական ձի<sup>705</sup>: Բուն թյուրքական բառ է. alky, alkuřun > ady<adaya-adyu><sup>706</sup> ձիերի երամակ, ձի, երիվար, aduyusun կենդանի<sup>707</sup>: Հմմտ. մոնղ. ajirga<adirga, ajirya: Պահպանվել է և՛ օղուզական, և՛ դփչաղական լեզուներում *adgar/ayqır/adğırak* բեղմնավորող հովատակ: Adğırık ձիու երամակ, ձիաբուծարան: Adugun ձիու երամակ: Azpara(н) բառը կցվելով կենդանիների անուններին, դրանց տալիս է արուի իմաստ: Ծագում է ընդհանուր ալթայան adğırğa ձևից<sup>708</sup>:

<sup>702</sup> Այս մասին մանրամասն տե՛ս, Батманов И., *Новые эпиграфические находки в Киргизии*, Фрунзе, 1962, стр. 39, *Формы семьи у дотюркских и тюркских племен Южной Сибири, Семиречья и Тянь-Шаня в древности и средневековье*, ТС, Москва, 1973, стр. 287-306, Кубарев В., *Древнетюркские изваяния Алтая*, Москва, 1984, стр. 188, Мусаев К., *Лексика тюркских языков в сравнительном освещении*, Москва, 1975, стр. 375, Радлов В., *Из Сибири*, Москва, 1989, стр. 827, Савинов Д., *Народы Южной Сибири в древнетюркскую эпоху*, Ленинград, 1984, стр. 174.

<sup>703</sup> Տե՛ս, Баскаков А., *Введение в изучение тюркских языков*, Москва, 1969, стр. 383.

<sup>704</sup> Birdoğan N., *Köroğlu*, İstanbul, 1996, s. 192.

<sup>705</sup> *Azərbaycan Dilinin İzahlı Lüğəti*, Bakı, 2006, s.181. (այսուհետև՝ ADIL):

<sup>706</sup> Котвич В., *Исследование по алтайским языкам*, Москва, 1962, стр. 283.

<sup>707</sup> Borovkov A.K., *Orta Asya'da Bulunmuş Kur'an Tefsirinin Varlığı (XII-XIII Yüzyıllar)*, (Rusçadan çev. Halil İbrahim Usta, Ebulfez Amanoğlu), Ankara, 2002, s. 328 (այսուհետև՝ ОБКТ).

<sup>708</sup> Севортян Э., *Этимологический словарь тюркских языков*, 1-7, Москва, 1974, стр. 108.

**At** ձի, երիվար: Ընդհանուր թյուրքական բառ է, զուգահեռներ ունի մոնղոլական լեզուներում (հմմտ. մոնղ. *art* երիվար, կրտած ձի, *adyu*, *adyuɣ* երամակ)<sup>709</sup>, բոլոր ժամանակակից թյուրքական լեզուներում ունի ձի բառի իմաստը<sup>710</sup>: Միայն յակուտերենում է, որ այն կիրառվում է «կրտած ձի» կամ ընդհանրապես՝ կրտած կենդանի իմաստներով: Տարբեր լեզուներում *at* բառը տարբեր է միայն ձայնավորով, օրինակ՝ *ալթ.*, *բաշկ.*, *գագ.*, *դագ.*, *կկալպ.*, *դրդգ.*, *կում.*, *նոդ.*, *թաթ.*, *թուրք.*, *թուրքմ.*, *ույդ.*, *խակ.*, *յակ.* սալար.<sup>711</sup> *at*, *թուվ.*, *չուվ.* *ut*, *ուզբ.* *ot*: Ինչպես ցույց են տալիս հին տեքստերի հետազոտությունները, *at* բառի *a* հնչյունը մաքուր կարճ *a* է:

**Dilkar**Նախ. բրբռ. շատ նիհար ձի<sup>712</sup>:

**İlx** դեռ չհեծնած, չքշած ձի: Ժամանակակից ադրբեջաներենում \**ǰ* հնչյունը նեղ ձայնավորներից առաջ չի պահպանվել<sup>713</sup>: Այս բառը հին տեքստերում բոլոր մյուս ընտանի կենդանիների անվանումների հետ կիրառվելիս հաղորդում է դրանց հոտի կամ նախրի իմաստ: Չի կիրառվել միայն ձիու անվանումների հետ: Այստեղից կարելի է ենթադրել, որ այն ի սկզբանե կապված է եղել «ձի» նշանակության հետ և սկզբում ունեցել է երամակի իմաստ՝ ի տարբերություն *at* բառի, որը միշտ հանդես է եկել «ձի» ընդհանուր նշանակությամբ<sup>714</sup>:

**Baygar** էգ մտրուկ<sup>715</sup>: Ադրբեջաներենից գատ այս բառը կիրառվում է գագաուզերենում և թուրքերենում և նշանակում է «լծկան ձի», ադրբեջաներենում՝ նաև «զամբիկ», այսինքն՝ կիրառվում է տնտեսության մեջ աշխատող, բանող ձիու համար: Հնարավոր է, որ այն հանգում է իրանական *bār-* «բեռ» և *-gīr* < *gereftan* «վերցնել» բայի ներկայի հիմքով կազմված ձևին և համարում է իրանական փոխառությունների շարքը: Բառացիորեն անվանումը նշանակում է «բեռ կրող, վերցնող», ինչն ամբողջությամբ համապատասխանում է կենդանու ունեցած գործառնություն: Նախիջևանի շրջանի բարբառներում տնտեսական նշանակության ձիու համար կիրառվում է մեկ այլ անվանում ևս, որի ծագումը կարծում ենք հնարավոր չէ վերլուծել թյուրքական դաշտում. *cəko* սայլը քաշող ձի:

**Baytal** Չեմբերեքի բարբառում՝ երկու տարեկան զամբիկ, իսկ գրական լեզվում կիրառվում է սրանից կազմված *baytar* բառը, որը նշանակում է «անասնաբույժ»: Այս բառը հանդիպում է համեմատաբար ուշ շրջանի, 15-16-րդ դարերի հուշարձաններում: Մոնղոլական լեզուներում հանդիպում է *байтасун*, *байтас*, *байсан* ձևերով «երեք տարեկան զամբիկ» նշանակությամբ, բուրյաթերեն *байтасан*: Նման է յակուտերենի *байтасын* ձևին՝ «չծնած զամբիկ կամ կով»: Հետազոտողները *байтасун*, *байтал* բառերը համարում են հոմոգեն: Սակայն չի բացառվում, որ այն և՛ թյուրքական, և՛ մոնղոլական լեզուների համար փոխառություն լինի:

**Kurux**Նախ. բրբռ. վեց ամսեկան մտրուկ (NՏL 50):

**Madyan** երկու տարեկան զամբիկ: Իրանական փոխառություն է:

<sup>709</sup> Садыков С., *Монгольско-тюркские языковые параллели*, Фрунзе, 1983, стр. 46.

<sup>710</sup> Щербак А., *Названия домашних и диких животных в тюркских языках*, Историческое развитие лексики тюркских языков, Москва, 1961, с. 84.

<sup>711</sup> Тенишев Э., *Саларский язык*, Москва, 1963, с. 50.

<sup>712</sup> Əhmədov M., *Naxçıan Şivələrinin Luğəti*, Bakı 2001, s. 34 (այսուհետև՝ NՏL).

<sup>713</sup> Щербак А., *Сравнительная фонетика тюркских языков*, Ленинград, 1970, стр. 158.

<sup>714</sup> Щербак А., *Названия домашних и диких животных в тюркских языках*, Историческое развитие лексики тюркских языков, Москва, 1961, стр. 84, (այսուհետև՝ Щербак).

<sup>715</sup> Akdoğan Y., *Azerbaycan Türkçesin'den Türkiye Türkçesi'ne Büyük Sözlük*, İstanbul, 1999, s.73.

**Մանր և խոշոր եղջերավոր կենդանիների անվանումներ**

**Balax** Նախիջևանի բարբառում՝ գոմեշի ձագ<sup>716</sup>: Քոչվոր ժողովուրդների համար այնքան մեծ է եղել տնտեսական նշանակության կենդանիների տեղն ու դերը նրանց կենցաղում, որ հաճախ կենդանիներին տրվող անվանումները նույնացվել են մարդկանց տրվող անվանումների հետ. bala 1. գավակ, երեխա 2. կենդանու կամ թռչնի ձագ; aba/ebe խոշո եղջերավոր կենդանի կամ, ընտանիքի նահապետ<sup>717</sup> (տե՛ս նաև inək բառահոդվածը):

**Buğa** չկրտած, դեռևս աշխատանքի չլծված, բեղմնավորող ցուլ, buğaca ցլիկ<sup>718</sup> (ADIL, I, 354): Համաթյուրքական բառ է, առաջացել է буг «գուգավորել» արմատից: Վերջինս վերականգնվել է թուրքական բարբառներում boğru/boğur/bukuk ձագ և biko, bikag երեխա բառերի օգնությամբ<sup>719</sup>: Այլ կենդանիների անվանումների հետ կիրառվելիս հաղորդում է արուի իմաստ:

**Burmaq** «կրտած արու կենդանի»: *Boruk* հին թյուրքական բառ է, Մ.Քաշղարու բառարանում burmak բառը վկայված է «ծալել, ոլորել» իմաստով, հետագայում ստացել է նաև «կրտել» իմաստը, պահպանվել է օղուզական լեզուներում և դրդերենում (դրդ. երկու տարեկան կրտած խոյ), ադրբ. burmaq «կրտած արու կենդանի», ырух ադրբ. բրբռ. կրտած ոչխար, թուրք. burmak, գագ. burmaa «կրտել»):

**Dizman** ադրբ. Օրդուբադի բրբռ. վեց տարեկան այծ<sup>720</sup>: Հազվադեպ են այն բառերը, որոնք երեք տարեկանից հետո ներկայացնում են որոշակի տարիքային խումբ հանդիսանալով առանձին բառապաշարային միավոր: Նման բառերը ինչպես այս օրինակում, հիմնականում պահպանվել են բարբառներում: Դրանցից է նաև Նախիջևանի բարբառում պահպանված yabi անվանումը «ծեր, կրտած ձի» նշանակությամբ:

**Donuz** խոզ: Հին թյուրքական ծագման բառ է: Տարածված է արևմտադիչաղական և հարավարևմտյան օղուզական լեզուներում: Դ հնչյունը բառասկզբում չի հանդիպում, իսկ բառամիջում ծագում է \*ղ, \*ղգ, առանձին դեպքերում նաև \*ղգ, \*ղկ երկհնչյուններից: Ետնալեզվային ձայնավորներից հետո՝ դ>m domuz: Հնչյունական տարբերակներ են doñuz /toñuz/ dañkuz/ danuz/ onuz/ dañuz/ dankuz/ tongus/ tonuz/ toñuz/ tonguz: Ուղղորդված, կարակալակերենում, նողայերենում, դրդերենում donuz և çoçka բառերը հավասարապես կիրառվում են որպես հումանիշներ, սակայն ոչ մի լեզվում տարվա կենդանակերպերով օրացույցում «խոզի տարին» çoçka բառով արտահայտված չէ, չնայած որ մի շարք լեզուներում այն հանդես է գալիս որպես խոզի հիմնական անվանում: **Xocu** խոճկոր:

**Dorba** Նախ. բրբռ. գոմեշի երկու տարեկան ձագ (NŞL 35):

**Erkəç** թյուրքական ծագման բառ է: Նախ. բրբռ. «հոտի առջևից գնացող այծ» (NŞL 38) Հին թյուրքերենում վկայված նաև *irk* հնչյունական տարբերակով «խոյ կամ երեք տարեկան այծ»<sup>721</sup> իմաստով: Պահպանվել է ժամանակակից դրդերենում. ирик հասուն ոչխար:

**Erkek** մի տարեկանը լրացած պարարտ գառ (NŞL 38)

**Qısır** թյուրքական ծագման բառ է: Նշանակում է «դեռ չծնած կամ ընդհանրապես ստերջ ընտանի կենդանի»: Պահպանվել է գրեթե բոլոր թյուրքական լեզուներում:

<sup>716</sup> Əhmədov M., *Naхçıvan Qrupu Şivelerinin Luğeti*, Bakı, 2001, s. 14.

<sup>717</sup> Севортян Э., *Этимологический словарь тюркских языков*, Москва, 1974, (аба բառահոդված):

<sup>718</sup> *Azərbaycan Dilinin İzahlı Lüğəti*, Bakı, 2006, 354 s.

<sup>719</sup> Татаринцев Б.И., *Этимологический словарь тувинского языка*, Новосибирск, 2000, 1т., стр. 28.

<sup>720</sup> *Azərbaycan Dialektoloji Lüğəti*, Ankara, 1999, s. 147.

<sup>721</sup> Arat R., *Kutadgu Bilig*, Ankara, 1947, s. 4353 (այսուհետև՝ KB).

*İnək* կով: Կիրառելի է և՛ դփչաղական, և՛ օղուզական լեզուներում: Ըստ Շչերբակի *инәк* կով, *әнә* մայրիկ բառերը կապված են իրար հետ: Հին թյուրքական հուշարձաններում՝ *ingek* կով կամ մեկ այլ խոշոր եղջերավոր էգ կենդանի: Հմմտ. մոնղ. *ингэн*:

*Кәл* գոմեշ. պարսկական փոխառություն է:

*Кәлә* Նախիջևանի բրբռ. առանց կոտոշների, մանր ականջներով ոչխար: *Kola* առանց կոտոշների տավար:

*Xar*<sup>722</sup> Ջուլֆայի, Չեմբերեքի, Ֆուզուլիի, Քարախի և Օրդուբադի բարբառներում՝ 1. տարիքով, կրտած այծ 2. խոշոր էգ 3. ստերջ այծ: *Har* դփչ. «ավանակ», հմմտ.՝ ժ.պ. *xar* «ավանակ» < հ. իր. \**xara-*:

*Xotən* մինչև երկու տարեկան գոմեշի ձագ (ADIL):

Լեզուների բառապաշարը հարստանում է ինչպես ներքին ռեսուրսների օգտագործմամբ բառակազմական տարբեր եղանակներով, այնպես էլ փոխառությունների միջոցով: Բառակազմության տարբեր մեթոդների, ինչպես նաև փոխառյալ բառերի պարզաբանումը թույլ է տալիս կատարել հետագա տեսական ընդհանրացումներ: Չնայած թյուրքական անասնապահական եզրաբանության՝ հիմնական շերտը բնիկ է, այնուամենայնիվ, անասնապահության զարգացման հետ մեկտեղ ժամանակի ընթացքում ավելանում են փոխառությունները՝ հատկապես արաբական և իրանական լեզուներից, քանի որ հարաբերություններն այդ ժողովուրդների հետ իսլամի ընդունումից հետո ավելի ինտենսիվ են դառնում: Հետագայում, երբ արդեն թյուրքական ազգություններն անցնում են նստակեցության, և քոչվոր անասնապահության նշանակությունը նվազում է, շատ փոխառություններ դուրս են մղվում գրական լեզվից, բայց որոշ չափով պահպանվում են բարբառներում: Անասնապահական եզրաբանության առանձնահատկություններից մեկն էլ բառապաշարային միավորների կենսունակությունն է. որոշ բառեր, որոնք ընդհանուր են թյուրքական լեզվաընտանիքի մի ճյուղի համար, հանդիպում են նաև այլ ճյուղերի լեզուներում և բարբառներում: Օրինակ՝ *baytal* «զամբիկ» բառը, որը հատուկ է դփչաղական լեզուներին, պահպանվել է ադրբեջաներենում և թուրքերենի արևմտյան խմբի բարբառներում, իսկ գրական լեզուներում կիրառվում է նույն արմատից կազմված *baytar* բառը՝ «անասնաբույժ» իմաստով: Որևէ ընտանի կենդանու տրվող անվանումների բազմազանությունը կապված է տվյալ ժողովրդի տնտեսության մեջ ունեցած նրա արժեքայնության ինչպես նաև այդ ժողովուրդների կրոնական պատկերացումների հետ: Որպես պատկերավոր օրինակ կարելի է բերել խոզի անվանումը: Հին թյուրքական շրջանում հանդիպում են *кабан* արմատից կազմված անձնանուններ. *Кабанбай*, *Кабанды* (տղամարդու անուն): Այն հանգամանքը, որ վայրի խոզի անվանումը վերագրվում էր մարդուն, խոսում է այն մասին, որ մինչիսլամական շրջանում թյուրքական ցեղերի համար այդ կենդանին ուներ պաշտամունքային լիցք: *Domuz* անվանումը, որ համապատասխան հնչյունական տարբերակներով հատուկ է օղուզական լեզուներին, հին թյուրքերի կողմից կիրառվող կենդանակերպերի օրացույցում տարվա անվանում է: Նույնիսկ, եթե տվյալ ժողովրդի բառաֆոնդում տնտեսական նշանակություն ունեցող խոզի համար կիրառվում էր այլ անվանում, ապա միննույն է, *domuz*-ն ընկալվում էր որպես «օրացուցային խոզ»: Իսկ դփչաղական լեզուներում տարածված խոզի *чочка* անվանումը արձանագրված չէ հին հուշարձաններում և չունի ոչ մի դրական մակդիր գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ: Ամփոփելով ադրբեջաներենի անասնապահական եզրաբանության քննության արդյունքները, կարող ենք ենթադրել, որ

<sup>722</sup> Azərbaycan Dialektoloji Lüğəti, I cilt, Ankara, 1999, s. 237.

թեն դրանց հիմնական մասը բուն թյուրքական է, սակայն հանդիպում են նաև իրանական և արաբական փոխառություններ՝ իրանականի գերակշռությամբ:

### ***Հասպակումների ցանկ***

ալթ.- ալթայերեն  
բաշկ.- բաշկիրերեն  
գագ.- գագաուզերեն  
դագ.- դագախերեն  
կկալպ.- կարակալկապակերեն  
դրդգ.- դրդգերեն  
կում.- կումիկերեն  
նոդ.- նոդայերեն  
թաթ.- թաթարերեն  
թուրք.- թուրքերեն  
թուրք. բրբռ.- թուրքերենի բարբառներ  
թուրքմ.- թուրքմեներեն  
ժ.պ.է.- ժամանակակից պարսկերեն  
ույդ.- ույդուրերեն  
խակ.- խակասերեն  
յակ.- յակուտերեն  
սալար.- սալարերեն  
թուվ.- թուվիներեն  
չուվ.- չուվաշերեն  
ուզբ.- ուզբեկերեն

## **НАЗВАНИЯ ДОМАШНИХ ЖИВОТНЫХ В СОВРЕМЕННОМ АЗЕРБАЙДЖАНСКОМ ЯЗЫКЕ, ИХ ПРОИСХОЖДЕНИЕ И СЛОИ**

*Лусине Хачатрян*  
(резюме)

Азербайджанский язык является одним из тюркских языков, поэтому основу его лексического содержания образуют слова тюркского происхождения. Вместе с тем, являясь языком огузского происхождения, он отличается наличием специфических огузских слов. Скотоводческая лексика азербайджанского языка все еще не стала объектом специального исследования. Сравнительное, историческое и типологическое изучение лексики, и в особенности диалектов и говоров, способствует выявлению словообразовательных моделей, установлению закономерностей лексико-семантического развития этой группы терминов. Общность этих терминов и составляет сущность родственных отношений между тюркскими языками.